

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳՐԻԳՈՐ ՎԿԱՅԱՍԵՐ ԵՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ ՎԱՐՈՒՑ ՍՐԲՈՑ

Գրիգոր Բ. Կաթողիկոսը, որ Վկայասէր տիտղոսը ստացաւ, կարեւոր փոփոխութիւններ կատարած է մեր ծիսական մատենաներուն մէջ՝ դանոնք ճոխացնելու նպատակով: Յատուկ ուշադրութիւն դարձուցած է ձեռք բերելու շարք մը վկաներու վարքերը որոնք կը պակսէին մեր մօտ: Թէ քանի՜ վկայարանութիւններ թարգմանուած են Վկայասէրի վերահսկողութեամբ՝ չէ հազարդուած մէզի իր կամ իր գործակիցներուն կողմէ: Այլեւն «10 կամ 15 հատի ներքեւ» դրած է «Գրիգոր Վկայասէրի յիշատակարան» (Շնորհալի եւ պարագայ իւր, էջ 32):

Այս յօդուածին նպատակն է ծանօթացնել այն վկայարանութիւնները եւ ներքողեանները որոնք թարգմանուած են Վկայասէրի եւ իր գործակիցներուն միջոցաւ եւ ունին յիշատակադրութիւն այդ մասին: Դասաւորած ենք նախ թուականի կարգով եւ ապա անուններու:

1.— 1092.— Վկայարանութիւն Ս. Եւտոքսիոսի, Մարինոսն կոչեցելոյ, եւ Ռոմէլի եւ Չենոնի եւ Մակարա, որք եղեն յամա Մարկիանոսի ամբարիշտ թաղաւորի.— Թարգմանեցաւ պատմութիւն սրբոց վկայիցս ի յունականէն ի մերս՝ ի մայրաքաղաքիս Միկետենոյ, ի թուականիս Հայոց ՇՆՍ. ընդ որս Քրիստոս տացէ վարձս բարեաց աշխատողացս ի ամա.— Չեն. Ս. Յ. Թ. 1 Գ, էջ 418-424:

2.— 1100.— Վկայարանութիւն սրբոյն Ստեփանոսի Հռովմայ Հայրապետի եւ որոց ընդ նմա.— Յամին հինգհարիւրորդի, քառասներորդի, իններորդի թուականութեանս Հայոց թարգմանեցաւ պատմութիւնս հանդերձ այդ բազում ներքողական եւ վկայական ճառիւք ի յունականէն ի մերս ի ձեռն սուրբ քահանայապետին Աստուծոյ՝ տեսոն Գրիգորիսի Հայոց Կաթողիկոսի.— Կարինեան Յուլիան, 916, Խէ:

3.— 1101.— Պատմութիւն վարուց Եփրեմի Վարդապետի Խորին Ասորւոյ, զոր թարգմանեաց յասորոց ի մերս Երջանիկ Կաթողիկոսն Հայոց Գրիգորիս Վկայասէր, ի թուականիս Հայոց ի ՇՄ.— Չեն. Ս. Յ. Թ. 74, էջ 547-614:

4.— 1101.— Պատմութիւն Սրբոյն Յովհաննու Ոսկերեանի Կոստանդինուպոլսի Եպիսկոպոսի, եւ տիեզերաց լուսաւորչի, ծննդեանն եւ անդեանն եւ զեղեցիկ քաղաքավարութեանն.— Յամի հազարերորդի հարիւրորդի Աստուծոյ մերոյ եւ Տեսոն Յիսուսի Քրիստոսի զալստեանն, եւ հինգհարիւրորդի յիսներորդի ի մերում թուականութեանս, եւ յեւթն եւ ի տասներորդ ամի թաղաւորութեանն Կոմնոսի Ալէքսի բռնակալի, եւ Գրիգորիս որդի Գրիգորի Մադիստոսի Հայկազնոյ, ըստ աշխարհի Պարթև, ըստ ժառանգութեան Պահլավիկ, ըստ ցեղընտիրն լինելոյ յազգէ Արշակունի, որ եւ ոգորմութեամբն Աստուծոյ կոչեցայ ի դիտապետութիւն Աղբանաղեանս, ի բնիկ

աթոռ հայրապետութեան նախնեացն խոնջ: Եւ բազում նեղութիւն կրեալ մեր յայլասեռ ազգաց հեթանոսաց եւ բնակաց: Եւ ապա ի յառաջատացեալ ամի հասաք ի սուրբ լեռն, զոր Սեան կոչեն, ի մեր սեփական պարզեւական եկեղեցիքն յուխտն սուրբ, որ ըստ ասորի բարբառոյ Պապահոյ կոչի, որ թարգմանի Դրախտ Աստուծոյ: Եւ անդ յերեսուն եւ ի վեց ամի մերոյ աթոռակալութեանս, թարգմանեցի զվարս ճշնութեան մեծ եւ սքանչելի ատեն Աստուծոյ Յոհաննու Ոսկերերանի, Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի, ի ձեռն ատն միոյ, որում անուն էր Թէոփիոտէ՝ ազգաւ յոյն: Եւ ապա ետու վերստին արծարծել զսա ի տարաբան եւ յօտարաձայն բայիցն եւ բառից առաջին թարգմանութեանն ըստ քերթողացն իմաստից միաշար տողելով, ի ձեռն Մատթէոսի եպիսկոպոսի, որ սնեալ եւ վարժեալ էր ընդ մերով ձեռամբ. — Ձեռ. Ս. Յ. Թ. 79, էջք 180:

5. — 1103. — Վկայաբանութիւն սրբոցն Ղամպէոսի եւ Ղամպէուհոյ ճշնագրեաց վկայիցն Քրիստոսի. — Յամին հինգհարիւրորդի յիսներորդի երկրորդի ի թուականին Հայոց՝ թարգմանեցաւ վկայաբանութիւն սրբոցս ախոցիկ ի յունականէն ի մերս՝ ի ձեռն Գրիգորիսի Վկայասիրի սրբազան Կաթողիկոսի Հայոց Մեծաց, զոր Տէր Աստուած պսակակից արասցէ սրբոցս. — Մատ. Հայկ. Թարգմանութեանց, էջ 721-2:

6. — Սքանչելիք որ եղեն ի ձեռն սրբոյ եւ մեծ վկային Քրիստոսի՝ Գէորգեայ, զոր արարեալ է պատանոյն Գէորգեայ, զերեցելոյն յաղղէն Գիւաց. — Իրազործեցաւ զործ սքանչելեացս ի ժամանակս Փոկասու Տիրանոսի Կայսերն յունաց, եւ թարգմանեաց ի հոռոմոց ի Հայս սուրբ քահանայապետն Հայոց Մեծաց Գրիգորիս Վկայասէր, զոր եւ պսակակից արասցէ սուրբ վկային՝ աղօթիւք ամենայն սրբոց. — Ձեռ. Ս. Յ. Թ. 1 Դ, էջ 916-923:

7. — Վարք եւ քաղաքավարութիւն Ս. Գրիգորի Աստուածարանի, Նազիանզու Եպիսկոպոսի, զոր զրեաց քահանայն Կեսարու Կապադոքովկացոց եկեղեցոյն եւ համանուն նորին, զոր թարգմանեաց ի յունականէն սրբազան Կաթողիկոսն Հայոց Մեծաց՝ Գրիգորիոս Վկայասէրն. — Ձեռ. Ս. Յ. Թ. 1 ա, էջ 118-127:

8. — Երանելոյն Թէոփիլոսի ասացեալ ներբողեան պատմադրարար Սուրբ Հօրն մերոյ եւ Լուսաւորչի քահանայապետին Քրիստոսի եւ վկայի՝ Մեծին Գրիգորի Արքեպիսկոպոսի Հայոց Մեծաց աշխարհին. — Թարգմանեցաւ լուսադարդ եւ վաշկաշար ծառս այս ի յունականէն ի մերս, հրամանաւ երիցս երանեալ հայրապետին՝ տեառն Գրիգորիսի Հայոց Մեծաց Կաթողիկոսի, ի ձեռն իմաստուն եւ հանճարեղ թարգմանչին Թէոփիստէի. — Ձեռ. Ս. Յ. Թ. 89, էջ 1-165:

9. — Պատմութիւն Ս. Մամասս ծննդեան եւ սննդեանն եւ վկայութիւն նորին. — Յաւրինեցաւ ծառ պատմութեան սրբոյ վկայիս Մամասս, ժամանաւր ինչ ըստ հնոց տարինակաց, եւ բովանդակն ըստ նոր թարգմանութեան սրբազան Կաթողիկոսին Հայոց Մեծաց՝ տեառն Գրիգորիսի Վկայասիրի, զոր եւ պսակակից սրբոյս արասցէ Քրիստոս. — Ձեռ. Ս. Յ. Թ. 1 Գ, էջ 212-218:

10. — Երանելոյն Արքա Եփրեմի Խորին Ասորոյ ներբողեան պատմադրարար ասացեալ ի զլիսատումն Ս. Յովհաննու Մկրտչին Քրիստոսի. — Անբաժանելի Ս. Երբորդութիւն, պարզեւեռ զողորմութիւն եւ զթողութիւն մեղաց ասացողացս եւ լսողաց եւ փափաղով ներբողինիս տեառն Գրիգորիսի Վկայասիրի, թարգմանողի ծառիս, եւ Քրիստոսի փառք. — Ձեռ. Ս. Յ. Թ. 1 Բ, էջ 490-495:

11. — Վարք եւ քաղաքավարութիւն եւ նահատակութիւն սուրբ եւ փառաւորեալ

մեծ վկայուհւոյն Պարասկեւեայ.— Թարգմանեցաւ ի յունականէ ի մերս ի ձեռն սրբազան եւ վկայից սիրողի տեառն Գրիգորի Կաթողիկոսի Հայոց, որում ողորմեցի Տէր Յիսուս Քրիստոս, ամէն.— Զ. Բ. Սարգիսեան, Յուլիոս Զեռագրաց, Բ. Հատոր, էջ 509:

12.— Վկայարանութիւն նահատակութեան սուրբ եւ փառաւորեալ ճշնազգեաց մարտիրոսին սրբուհւոյն Վստլաւեայ Կուսին եւ երանելոյն Յուլիանեայ.— ԶԹարգմանող եւ գլխաւորող զպատմութեան սրբոց

վկայիցս՝ զտէր Գրիգորիս Հայոց Կաթողիկոս յիշեալիք ի սրբամատոյց յաղաթս ձեր. ընդ նմին եւ զիս զանարժան քահանայս զԳրիգոր Թորոսանց եւ զձնողսն իմ եւ զբաւարկող զրոցս.— Յիշտ. Զեռագրաց, Անթիլիաս, էջ 276:

13.— Վկայարանութիւն սուրբ եւ փառաւորեալ վկայիցն եւ երանեալ նահատակացն Քրիստոսի՝ Փոտինոսի եւ Անիկասոսի, եւ որոց ընդ նոսա.— ԶԹարգմանող պատմութեանս զտէր Գրիգորիս Կաթողիկոս Հայոց յիշեալիք ի Տէր.— Զեռ. Ս. Յ. Թ. 1 ր, էջ 916-931:

Ն. ԵՊՍ. ԾՈՎԱԿԱՆ